ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/206 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	China Co, Սկարլետ ՍՊԸ	450 հատ դպրոցական պայուսակներ գրենական պիտույքներով, որի մեջ ներառված է. Դպրոցական պայուսակ՝ երկուական դարակներով՝ առանձնացված ամուր շղթայակապաններով /ըստ պայուսակի գույնի/: Պայուսակը կարված լինի բարձրորակ, էկոլոգիապես մաքուր, ամուր կտորից /բրեզենտ/՝ ոչ կլինկորային նյութից, խիտ հումքից, չթրջվող, զերծ տարատեսակ քիմիական նյութերի հոտերից: Հիմնական պատի /հետնամաս/ ներսից լինի միջին խորությամբ շղթայակապանով գրպան: Երկրաչափական չափսերը՝ 20սմ+35սմ+45սմ, վերնամասը լինի կորաձև: Պայուսակի աջ և ձախ կողքերին լինեն բաց գրպաններ՝ շշով հեղուկ տեղադրելու համար: Պայուսակի առջևի մասում առանձնացված լինի միջին չափի մեկ այլ գրպան՝ շղթայափականով: Պայուսակի վրա լինի ուսերին կրելու հնարավորություն՝ ուսագոտիներ: Ուսագոտիներն ունենան հարմարավետ փափուկ ներդիրներ: Միևնույն ժամանակ պայուսակն ունենա ձեռքին հարմարեցված կտորե բռնակ՝ ամուր և փափուկ ներդիրով: Պայուսակի գույնը և նկարազարդումը՝ սև, մուգ կապույտ, կարմիր, նարնջագույն՝ հնարավոր գունային հավելումներով: Նկարազարդումները՝ աղջիկներին և տղաներին համապատասխան: Գրենական պիտույքներ. ընդհանուր տետր 48 թերթանի (վանդակավոր) 6 հատ- հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի

		մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն՝ 16x20սմ: Ընդհանուր տետր 48 թերթանի (տողանի) 6 հատ, հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն, չափսը՝ 16x20սմ: Տետր 12 թերթանի (վանդակավոր) 10 հատ նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն (չափսը՝ 16x20): Տետր 12 թերթանի (տողանի) 10 հատ նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն (չափսը՝ 16x20): Բոլոր տետրերը լինեն լուսանցքներով: Գրիչ-գնդիկավոր կապույտ միջուկով 2 հատ, սև մատիտ գրաֆիտե միջուկով 1 հատ, նկարչական ալբոմ 1 հատ- առնվազն 32 թերթ՝ հաստ ստվարաթղթե կազմով, գունավոր մատիտների 1 տուփ (տուփի մեջ 12 հատ): Ջրի շիշ՝ պլաստմասե, տարողությունը 500մլ, հնարավոր գունային հավելումներով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Շուշան Տեխնիկս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/206 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		